ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 3 անդամներ:

Բացակա էին՝ Ալեքսեյ Ռուդոմյոտկինը, Միխաիլ Ռուդոմյոտկինը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ալեքսեյ Չիչյովը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արարատ Աբրահամյանը

Լսեցին
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024Թ-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՐԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, ավագանին որոշում է

Հաստատել Ֆիոլետովո համայնքի հունվարի 19-ի արտահերթ նիստի օրակարգը

Օրակարգ

1. Ֆիոլետովո համայնքի 2024 թվականի հունվարի 19-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Գույքի նվիրաբերությունը ընդունելու մասին

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 01-Ա/

Լսեցին

ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԿԱՐԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածիով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 4 հունվարի 2024 թվականի N 12-Ա որոշումը Ֆիոլետովո համայնքի ավագանին որոշում է.

1.Պետական սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Ֆիոլետովո, 2-րդ փողոց, 44 դպրոց հասցեից առանձնացված, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, համայնք Ֆիոլետովո, 2-րդ փողոց, 44/1 հասցեում գրանցված, 0.137621 հեկտար մակերեսով հողամասը (այսուհետ՝ գույք) (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11102023-06-0074 վկայական) մանկապարտեզ կառուցելու նպատակով ընդունել որպես նվիրաբերություն:

2.Համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով և ժամկետներում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի հետ կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 02-Ա/

Ավագանու անդամներ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԼՈՒԽԻՆՈՎ
ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ
ՄԻԽԱԻԼ ՉԻՉՅՈՎ

Համայնքի ղեկավար

ԱԼԵՔՍԵՅ ՉԻՉՅՈՎ_____

Նիստն արձանագրեց՝ Արարատ Աբրահամյանը

_____